Բեռնափոխադրումների կազմակերպման ծառայություն մատուցելուպայմանագիր

Ցանկ

Ցանկ 1
Հոդված 1. Պայմանագրում օգտագործված հասկացություններ 2
Հոդված 2. Պայմանագրի առարկան 3
Հոդված 3. Ընդհանուր պայմաններ և դրույթներ 3
Հոդված 4. Հավաստումներ 3
Հոդված 5. Գաղտնիություն 3
Հոդված 6. Գործարար համբավի պաշտպանություն 4
Հոդված 7. Անհաղթահարելի ուժ /ֆորս մաժոր/ 4
Հոդված 8. Պայմանագրի փոփոխություններ 4
Հոդված 9. Կիրառելի իրավունք, վեճերի լուծման կարգ 4
Հոդված 10. Պայմանագրի լեզուն, այլ պայմաններ 5

Հարգելի Հաճախորդ,

Ուրախ և շնորհակալ ենք, որ Ձեր բեռներիփոխադրումների կազմակերպմանհամար ընտրել եք «Օնէքս» ՍՊ ընկերությանկողմից առաջարկվող ծառայությունը:

Խնդրում ենք ուշադրությամբ ծանոթանալ Օնէքսի կողմից տրամադրվող ծառայությունների պայմաններին, քանի որ դրանց համաձայնություն տալու մասին Կայքի համապատասխան տողում նշում կատարելով Դուք բեռնափոխադրումներիկազմակերպման ծառայություն մատուցելու պայմանագիր եք կնքում Օնէքսի հետ, որի ուժով իրավունք եք ստանում օգտվելու Օնէքսի ծառայություններից, ինչպես նաև կրում եք Պայմանագրով սահմանված պարտավորություններ:

Հոդված 1. Պայմանագրումօգտագործվածհասկացություններ

1.1. **«Օնէքս»**՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցվածսահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, որն ունի ՀՀ Տրանսպորտի եւ Կապի Նախարարության կողմից 28/05/2015 թվականին տրված՝ փոստային կապի բնագավառում փոստային կապի գործունեության անժամկետ լիցենզիա (ՀՎՀՀ՝ 02640135, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Տերյան 105/1, Լիցենզիա՝ՓԿ N031), ի դեմս տնօրեն Սամվել Մարտիրոսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա.

1.2. **«Հաճախորդ»**՝ ֆիզիկական անձ կամ իրավաբանական անձի ներկայացուցիչ, որը գործելով իր կամ իրավաբանական անձի անունից, գրանցվել է Օնէքսի պաշտոնական Կայքում և ստեղծելօգտագործման հաշիվ, ինչպես նաև համաձայնություն տալով կնքել սույն Պայմանագիրը.

1.3. **«Կողմեր»**՝ Օնէքսը և Հաճախորդը միասին.

1.4. **«Պայմանագիր»**՝ Օնէքսի և Հաճախորդի միջեւ կնքված սույն՝ Բեռնափոխադրումների կազմակերպման ծառայություն մատուցելու պայմանագիրը, ինչպես նաև դրա անբաժանելի մասը հանդիսացող ընդհանուր դրույթները ու պայմանները.

1.5. **«Կայք»**՝ www.onex.am համացանցային կայքէջը.

1.6. **«Ծառայություն»**՝ Հաճախորդի հանձնարարությամբ Օնէքսի կողմից մատուցվող միջազգային բեռնափոխադրման կազմակերպման ծառայություն.

1.7. **«Պատվեր»**՝ Հաճախորդի կողմից Օնէքսին բեռնափոխադրման կազմակերպման ծառայություն մատուցելու հանձնարարություն.

1.8. **«Բեռ»**՝ Հաճախորդի կողմից գնված և Օնէքսի պահեստում սքանավորման միջոցով ստացված նյութական ապրանք/իր/գույք, որի փոխադրման ծառայությունը մատուցվելու է Օնէքսի կողմից.

1.9. **«Պահեստ»**՝ Օնէքսի կողմից Կայքով հայտարարված արտասահմանյան երկրների նշված հասցեներում գտնվող պահեստներ, որտեղ Օնէքսը ստանում է Բեռը և կազմակերպում է դրա առաքումը հասցեատիրոջը.

1.10. **«Վերափաթեթավորում»**՝Պահեստում ստացված Հաճախորդի բեռի փաստացի և ծավալային քաշի նվազեցման կամ համախմբմաննպատակով Օնէքսի հայեցողությամբ Բեռի հետ կատարվող գործողություն.

1.11. **«Անվտանգության վճար»**՝ վճարի դիմաց հաճախորդինտրվող արտոնություն:

Հոդված 2. Պայմանագրի առարկան

2.1 Պայմանագրով Օնէքսը պարտավորվում է Հաճախորդի Պատվերով մատուցել բեռնափոխադրման կազմակերպման ծառայություններ, իսկ Հաճախորդը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, չափով և ժամկետներում վճարել Օնէքսին և ստանալ Բեռը:

2.2 Օնէքսի ծառայություններից օգտվելու համար Հաճախորդը պետք է գրանցված լինի Կայքում որպես ինքուրույն օգտատեր և ունենա անձնական էջ/հաշիվ:

Հոդված 3. Ընդհանուր պայմաններ և դրույթներ

3.1 Սույն պայմանագրի անբաժանելի մասն են հանդիսանում ընդհանուր դրույթները և պայմանները, որոնց կարող եք ծանոթանալ **այստեղ**:

3.2 Հաճախորդը հաստատում է, որ ծանոթացել է նաև 3.1 կետով սահմանված ընդհանուր դրույթներին և պայմաններին:

Հոդված 4. Հավաստումներ

4.1 Հաշվի առնելով, որ Օնէքսը չի կարող ստուգել Կայքում գրանցվող Հաճախորդների կողմից ներկայացված տեղեկությունների, տվյալների իսկությունը և հավաստիությունը, ֆիզիկական անձ հանդիսացող Հաճախորդը հայտարարում և հավաստում է, որ լրիվ գործունակ ֆիզիկական անձ է, գործունակությունը որևէ կերպ սահմանափակված չէ:

4.2 Իրավաբանական անձ Հաճախորդի ներկայացուցիչը հայտարարում և հավաստում է, որ ներկայացնում է օրենքով սահմանված կարգով գրանցված և գործող իրավաբանական անձի, ունի տվյալ իրավաբանական անձի անունից հանդես գալու պատշաճ լիազորություններ:

Հոդված 5. Գաղտնիություն

5.1 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման ընթացքում Օնէքսը պարտավորվում է ապահովել Հաճախորդի՝ ծառայություններից օգտվելու գաղտնիության իրավունքը:

5.2 Օնէքսը պարտավորվում է երրորդ անձանց չհայտնել և որևէ այլ կերպով չհրապարակել Հաճախորդի վերաբերյալ իրեն հայտնի տվյալները (բնակության հասցե, գտնվելու վայր և այլն)՝ բացառությամբ օրենքով սահմանված կարգով նշված տեղեկատվության տրամադրման Օնէքսի պարտավորության դեպքերի:

5.3 Կայքում գրանցվելուց հետո Հաշվի մուտքի տվյալների գաղտնիության պահպանման պատասխանատվությունը կրում է Հաճախորդը, և վերջինս լիարժեք պատասխանատվություն է կրում իր հաշվի հետ կատարված ցանկացած գործողության համար: Այդ գործողությունների արդյունքում Օնէքսին կամ երրորդ անձանց պատճառված վնասի համար պատասխանատվությունը կրում է Հաճախորդը:

Միաժամանակ, Օնէքսի կողմից սույն Պայմանագրով սահմանված գաղտնիության ռեժիմի կամ տվյալների պաշտպանության բնագավառում կիրառելի իրավական ակտերի պահանջների խախտման դեպքում Օնէքսը կրում է գործող օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվություն:

Հոդված 6. Գործարար համբավի պաշտպանություն

6.1 Հաճախորդը պարտավորվում է անձամբ կամ միջնորդավորված որևէ կերպ չհրապարակել Պայմանագրով ծառայությունների մատուցման ընթացքի վերաբերյալ չճշտված և ոչ հավաստի այնպիսի տեղեկություններ, որոնք կարող են վնաս հասցնել Օնէքսի գործարար համբավին և հանգեցնել սպառողների մոտ Օնէքսի կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ ոչ հավաստի կարծիքի ձևավորմանը:

Հոդված 7. Անհաղթահարելի ուժ /ֆորս մաժոր/

7.1 Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Օնէքսը և/կամ Հաճախորդը ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

7.2 Այդպիսի իրավիճակներ են հանդիսանում ներառյալ, սակայն առանց սահմանափակման՝ երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ապստամբությունը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, բեռնափոխադրող տրանսպորտային միջոցների, ինչպես նաև ինքնաթիռների թռիչքների չեղարկումը կամ անորոշ ժամկետով հետաձգումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:

7.3 Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

Հոդված 8. Պայմանագրի փոփոխություններ

8.1 Օնէքսին իրավունք է վերապահվում միակողմանիորեն փոփոխել Պայմանագրի պայմանները՝ այդ մասին հրապարակելով տեղեկությունները Կայքում:

8.2 Պայմանագրի փոփոխությունները օրինական ուժ կստանան Օնէքսի կողմից փոփոխությունների մասին հայտարարության մեջ նշված ժամկետում և կտարածվեն հրապարակումից հետո ծագած պարտավորությունների վրա:

8.3 Օնէքսի ծառայություններից օգտվել շարունակելով՝ Հաճախորդը ընդունում և համաձայնում է Պայմանագրի փոփոխություններին:

Հոդված 9. Կիրառելի իրավունք, վեճերի լուծման կարգ

9.1 Պայմանագրի վերաբերյալ կամ և դրանից ծագած վեճերի նկատմամբ կիրառելի է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9.2 Պայմանագրի վերաբերյալ կամ դրանից ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, և Կողմերը պարտավոր են այդ նպատակով բավարար և ողջամիտ ջանքեր գործադրել:

9.3 Բանակցությունները ձախողելու և համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճի լուծումը հանձնվում է ՀՀ համապատասխան դատարանի քննությանը:

Հոդված 10. Պայմանագրի լեզուն, այլ պայմաններ

10.1 Կողմերը հայտարարում և ընդունում են, որ Պայմանագրի բովանդակությունն ամբողջությամբ համապատասխանում է իրենց կամահայտնությանը:

10.2 Եթե սույն պայմանագրի որևէ դրույթ անվավեր ճանաչվի, ապա դրա մյուս դրույթները չեն կորցնում իրենց ուժը: Սույն պայմանագրով չկարգավորված հարցերը լուծվում են Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

10.3 Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով:

10.4 Հաճախորդը հաստատում է, որ տիրապետում է հայերեն գրավոր և բանավոր լեզվին, ծանոթացել է Պայմանագրի բոլոր հոդվածներին ու կետերին, դրանց պայմաններն իրեն հասկանալի ու ընդունելի են: